տեղական ինքնակառավարման ռազմավարություններից: Այդ ռազմավարությունը պետք է մշակվի պետության առաքելության, նպատակների, խնդիրների, ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային վերլուծության, հիմնախնդիրների այլընտրանքային լուծման տարբերակների ճիշտ ընտրության, գնահատման և հետադարձ կապի համակարգի ձևավորման հիման վրա: Միայն այդ պարագայում է հնարավոր ունենալ հստակ մշակված, ինչպես նաև իրագործելի ռազմավարություն՝ հանրային կառավարման մակարդակում:

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ տնտեսական քաղաքականությունը ձևավորելիս սովորաբար հիմնվում են այս կամ այն հայտնի տեսական հայեցակարգի վրա, գտնելով, որ առանց որևէ հանրահայտ տեսության «հովանավորության» անհնար է կառավարել երկրի արդյունավետ տնտեսական աճը: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ տեսությունը ոչ միշտ է համընկնում իրականության հետ և երբեմն հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների:

Փորձենք առավել մանրամասն դիտարկել տնտեսական քաղաքականության և տնտեսագիտական հայտնի տեսությունների միջև կապն ու հեռանկարները:

Առհասարակ, երկրի տնտեսական քաղաքականության մասին խոսելիս, անպայման հարց է առաջանում քեյնսականության և ֆրիդմենականության կողմնակից լինելու մասին: Երկու-երեք տասնամյակ առաջ այս տեսակետն, ընդհանուր առմամբ, պիտանի էր: Այսօր այդ պարզամտությունը մի շարք պատճառներով կարող է հանգեցնել կասկածելի հետևանքների. համաշխարհային տնտեսության քանակական և որակական աճը, աշխարհի քաղաքական կառուցվածքում արմատական տեղաշարժերը, տնտեսական գործընթացները կարգավորելու նոր հնարավորությունները և վերջին տարիների մյուս երևույթները ծնեցին արմատական փոփոխություններ տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության մեջ: Իսկ ինչպիսի՞ տեսություններ են ընկած ներկայիս զարգացած երկրների տնտեսական քաղաքականության հիմքում:

Պարտադիր չէ, որ խոսքը վերաբերի հատուկ տեսական հիմնադրույթներին, և, բացի այդ, երկրների ղեկավարները բնավ գիտնական-տեսաբաններ չեն: Այնուհանդերձ, գերակշռող մոտեցումների համաձայն՝ ցանկացած շուկայական երկրի տնտեսական գործունեությունը այսպես թե այնպես հարում է տնտեսագիտական մտքի՝ ներկայումս ընդունված տեսական ուղղություններից մեկին, թեև հազիվ թե տեսությունն ամբողջությամբ համընկնի գործնական կյանքին: Օրինակ՝ անցած դարի վերջին քառորդում ԱՄՆ-ի տնտեսության վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ իրական տնտեսական քաղաքականությունը որևէ պահանջարկվող (կամ, առավել ևս, որևէ մեկին ձեռնտու) տեսության մեջ «տեղավորելը» ոչ միայն օգտակար չէ, այլև կարող է ապակողմնորոշել գիտական հասարակությանն ու ոչ ճիշտ ուղու վրա դնել երկրի ղեկավարությանը և, բացի այդ, իրական տնտեսական քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար այն չի կարող պարփակվել առանձին տեսական սխեմայի շրջանակներում: Նմանօրինակ փորձերի անհեռանկար լինելը ցույց տվեց հետխորհրդային մի շարք երկրների, այդ թվում՝ մեր հանրապետության անցած տարիների փորձը: Վերոգրյալից հետևում է, որ չի կարելի տնտեսական քաղաքականությունը կառուցել միայն մեկ տեսությանը համապատասխան և հակառակը, նպատակահարմար չէ տնտեսական քաղաքականության և գործնական միջոցառումների համակարգի «տեղավորումը» զուտ տեսական սխեմաներում:

Այսպես. որոշակի ժամանակահատվածի համար և կոնկրետ նախագահի իշխանության օրոք ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը որոշակի տեսական ուղղության «կապակցելը» խիստ տարածված էր XX դարի 60-80-ական թվականներին և այն բնութագրական էր ոչ միայն հայրենական, իմա՝ խորհրդային հետազոտողներին: Սակայն և՛ ԽՍՀՄ-ում, և՛ հետխորհրդային երկրներում վերլուծությունը մշտապես կենտրոնացվում էր գաղափարախոսական կապերով՝ խոչընդոտելով հետազոտությունների օբյեկտիվությունը:

Ջոն Մեյնարդ Քեյնսի նկատմամբ հանդուրժողական-քննադատական վերաբերմունքը սովորական երևույթ էր խորհրդային ժամանակներում, իսկ 1990թ-ից հետո այդ քննադատությունը վերաճեց ուղղակի անհանդուրժողականության: Հայացքների այս վերափոխումը ոչ վաղ անցյալում գերակշռող դիրք ունեցող տեսության նկատմամբ ինքնին մտորումների տեղիք է տալիս: Խոսքը չի վերաբերում դատարկ պատվախնդրությանը, շահամոլությանը կամ անիրազեկությանը, որը ստիպում է հայրենական «բարեփոխիչներին» տնտեսության վերակառուցումը տանել մոնետարիզմի ուղիով. այդ գործոններն ակնհայտ են և շուկայական «տապալումներում» նրանց դերը առաջիկա մի քանի տարում բացահայտ կլինի: Առավել կարևոր է գնահատել հայեցակարգային կոնֆլիկտի տեսական կողմը՝ ֆինանսների, գույքի և իշխանության գռեհիկ բաժանմամբ երկար ժամանակ պատնեշված, սակայն իր գոյությունն առ այսօր պահպանած: Ձևավորվել է այնպիսի պատկեր, ըստ որի քեյնսական տեսությունը, առաջին հերթին, որոշակի ժամանակահատվածում զուգակցվելով կոնկրետ երկրի տնտեսական քաղաքականության հետ՝ ոչ միայն բավականին խորն ու լայն է, որպեսզի ընդգրկի և բացատրի իրական տնտեսական ռազմավարության հիմնական ուղղություններն ու նրա արդյունքները կամ, ընդհակառակը, որպեսզի տնտեսական ոլորտի բոլոր գործնական միջոցառումները «դասավորվեին» տվյալ տեսական հայեցակարգի շրջանակներում, այլ տրամաբանորեն մտածելով՝ քեյնսականությունը

դրանից բացի տիրապետում էր բազմաթիվ այլ որակների մեծ «պաշարի», ինչպես թերությունների (մի ուղղության քննադատների համար), այնպես էլ առավելությունների (հակառակ ուղղության քննադատների համար): Այս որակները կարող էին ուղղակիորեն կապված չլինել տնտեսական քաղաքականության մեջ քեյնսական դրույթների պրակտիկ գործողությունների և ստացված արդյունքների հետ, սակայն տեսությունն այդ որակների պատճառով և՛ գովեստի, և՛ քննադատության առարկա հանդիսացավ, ընդ որում, և՛ «աջից», և՛ «ձախից» (այսինքն՝ ինչպես պլանային տնտեսության կողմնակիցների, այնպես էլ մոնետարիստների կողմից):

Սակայն տնտեսական զարգացման ընթացքն իր արդյունքներով, որպես կանոն, չէր բավարարում երկու կողմերին. կողմերից յուրաքանչյուրը դրա պատճառը համարում էր «ճշմարիտ» տնտեսագիտական հիմնադրույթների չպահպանումը: Քանի որ այդ հիմնադրույթները սովորաբար ունենում էին հակադարձ ուղղություններ, ստացվում էր, որ քննադատության է արժանանում ոչ այնքան որոշակի ժամանակահատվածի տնտեսական քաղաքականությունը, որքան այս կամ այն տեսության կողմնակիցների պատկերացումներն այդ քաղաքականության, նրա զարգացումների և հետևանքների վերաբերյալ, ընդ որում, ոչ այնքան «հակամարտ» տեսության դիրքերից, որքան այդ տեսության ընկալման խորության և պատշաճ հաշվեկշռվածության տեսակետից:

Կտրուկ պարզեցումը թույլ է տալիս նշել, որ իրական տնտեսությունը մշտապես զարգանում է առանձնահատուկ ուղիով՝ ոչ միշտ «ենթարկվելով» տեսական «արգելափակոցներին»: Սակայն դա տնտեսագիտական մտքի և գործնական կյանքի անհամապատասխանության ոչ միակ և, առավել ևս, ոչ կարևոր արտացոլումն է: Առավել քիչ ուշադրություն է դարձվում տեսական հիմնադրույթների մեկ այլ ուղղության վրա, որը որոշ հանգամանքներում առավել կարևոր բնույթ է ստանում: Խոսքը վերաբերում է նրան, որ հաճախ, հատկապես հրապարակային քննարկումներում, այս կամ այն տնտեսագիտական տեսության մասին պատկերացումները քաղվում են ոչ թե սկզբնաղբյուրներից, այլ կողմնակի հրապարակումներից: Շատ դեպքերում այն թույլատրելի է և միակ հնարավորը, բայց ոչ այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է մի ամբողջ երկրի վերափոխվող տնտեսական կուրսի բազմամյա ռազմավարությանը, երբ ոչ հավաստի աղբյուրներից ելնելով՝ եզրահանգումներ են արվում հեղինակավոր գիտնականի ճշմարտացիության կամ ոչ ճշմարիտ լինելու մասին, լավագույն դեպքում այն տնտեսական քաղաքականության օգտին լինել չի կարող:

Ամենաբարեխիղճ ուսումնասիրությունների թույլ կողմը կայանում է նրանում, որ այդ աշխատություններում, որպես կանոն, իրենց ազդեցությունն են թողնում սկզբնաղբյուրը հստակ արտացոլելուն խոչընդոտող բազմաթիվ գործոններ. օրինակ, հանուն սեփական հայեցակարգի ապացուցման՝ հետազոտվող տեսությունը միակողմանի ուսումնասիրելու ցանկությունը, համապատասխան տեղի (կամ ժամանակի) բացակայությունը տեսության հստակ ներկայացման համար և, վերջապես, տեսության վերլուծաբանի մոլորվածությունը, որը ոչ միշտ է պատահական: Սկզբնաղբյուրից հեռանալուն զուգընթաց (ժամանակի մեջ կամ միջանկյալ վերլուծությունների միջոցով) ընկալման սխալականությունը «քննադատների» նոր սերնդի հետ գնալով խորանում է՝ հանգեցնելով երկկողմանի աղավաղման մի կողմից, տեսությունը, որպես քննադատական վերլուծության կամ երկրի տնտեսական քաղաքականության հիմք, մյուս կողմից՝ այդ քաղաքականության որակական բնույթի իմաստով: Այն տեղի է ունենում ավելի հաճախ, քան կարող է թվալ: Առաջինը վերաբերում է Քեյնսին, որի տեսության անկյունաքարը, անկասկած, հարկաբյուջետային կարգավորումն է: Երբեմն քեյնսականության ուսումնասիրության կենտրոնում են դրվում պետական ծախսերի պակասուրդային ֆինանսավորման հանձնարարականները, որոշ դեպքերում հիշատակվում է տնտեսական վերելքի ժամանակաշրջանի փոխհատուցող ավելցուկների մասին, որը թույլ է տալիս ժամանակի մեջ հավասարակշռել ճգնաժամային տարիների պակասուրդները: Չի կարելի չնշել Քեյնսի այս դիտարկումներից յուրաքանչյուրի միջև բավականին մեծ տարբերությունները, որոնք այժմ գոյություն ունեն որպես ինքնուրույն ուղղություն, ընդ որում, նշված տարբերությունները թույլ են տալիս այդ տարբերակներից յուրաքանչյուրի վերաբերյալ կատարել բավականին տարաբնույթ և միմյանց հետ չհամընկնող եզրակացություններ: Սակայն կարևորն այդ չէ: Գլխավորը (դրանում կարելի է համոզվել, ուսումնասիրելով Քեյնսի առավել հայտնի աշխատությունը) կայանում է նրանում, որ բոլոր այդ տարբերակները ճշմարիտ չեն և արտացոլում են միայն նրա տեսության առանձին տարրերը, իսկ տնտեսության վրա ներգործության կենտրոնական միջոցը անգլիացի գիտնականը համարում էր ներդրումները և որոնց կարգավորմանն էլ ուղղված է աշխատությունը: Ինչ վերաբերում է բյուջեին և պակասուրդային ֆինանսավորմանը, ապա դրանք միայն ընդհանուր և լրիվ դատողությունների միջանկյալ փուլերն են՝ չնայած քեյնսական հայեցակարգի համար դրանց կարևորությանը[1]: Սակայն քեյնսականությանն անդրադառնալիս ներկայումս հիմնականում «մոռանում են» ներդրումային բաղադրիչի մասին: Նույն կերպ, որպես հիմնական թերություն, մատնանշվում է Քեյնսի անուշադրությունը դրամավարկային քաղաքականության նկատմամբ: Սակայն փողը, ինչպես և բյուջեն, Քեյնսի կողմից քննարկվել են դրանց համար սահմանված մասով: Առավել ևս, որ աշխատությունը հատուկ այդ կատեգորիաներին չի նվիրված: Այս երկու պատճառով դառնու՞մ է արդյոք քեյնսականությունը պարզեցված կամ ոչ բավարար մշակված տեսություն, քննարկման ենթակա հարց է, սակայն վերը նշված երկու դեպքերում Քեյնսի տեսության աղավաղման կամ, մեղմ ասած, խորը «աղքատացման» փաստն ակնհայտ է:

ԱՄՆ-ի նախագահ Ռ.Ռեյգանը, որին հաճախ անվանում էին «լիբերալ», իր գործունեությունը սկսեց տնտեսության մեջ պետությունն միջամտության կրճատման զուտ մոնետարիստական քայլերից. ապակարգավորմանն ուղղված մի քանի օրենքների ընդունումը և հարկերի իջեցումը կարծես թե համապատասխանում էին նախնական մտահղացմանը: Սակայն այդ «ազատական պահպանողականը» իր գործունեությունն ավարտեց վառ արտահայտված բյուջետային էքսպանսիայով, որը բնութագրվում էր հետպատերազմյան ժամանակաշրջանում դաշնային բյուջեի ամենախոշոր պակասուրդով, որն ապագայում, արդեն քլինթոնյան

[1] Кейнс Дж. Общая теория занятости, процентов и денег. М., 1948, с.33, 265-272, 359.

ժամանակահատվածում նպաստեց երկարաժամկետ տնտեսական աճին և արտադրողականության բարձրացմանը: Հետևաբար, «ռեյգանոմիկան» բնավ պահպանողական լիբերալիզմի հաղթարշավը չէր, ինչպես ներկայացվում էր մինչև վերջին ժամանակները. այն կարելի էր համարել բացարձակ բեյնսական քաղաքականություն, եթե 1990-ական թվականների վերջում չնվազեր ազգային խնայողությունների դինամիկան: Արդյունաբերության վերակառուցման ռեյգանյան եղանակների նման հետևանքը «չէր տեղավորվում» բեյնսական տեսության մեջ, թեև նախատեսվող արդյունքները զուտ բեյնսական էին: Այստեղ ակնհայտ է դառնում իրականության և տեսական մտքի միջև խոր հակասությունը: Տվյալ դեպքում խիստ դժվար է որոշել առանձին խմբերի և շրջանակների համար քաղաքական և տնտեսական օգուտները:

Վերջին տարիներին արդեն ավանդույթ է դարձել հայրենական «բարեփոխիչների» համար Ադամ Սմիթին ներկայացնել որպես իրական տնտեսական քաղաքականության «հոգևոր հայր» և նրա գաղափարներն ընդունել որպես բացարձակ ճշմարտություն: Եվ միայն նրա աշխատություններն ուսումնասիրած մասնագետներին է հայտնի, որ Ա.Սմիթի որոշ գաղափարներ ամբողջապես հակասում են, այսպես կոչված, «ազատականացման» մտքերին: Բավական է նշել, որ Ա.Սմիթը աշխատանքային հարաբերությունների հարցերում ընդունում էր մենաշնորհ ձեռնարկատերերի դեմ աշխատավորների կազմակերպված պայքարի իրավունքը՝ չխոսելով արդեն շուկայական համակարգում բարոյական սկզբունքներ ներդնելու նրա համառ փորձերից (որը, բնական է, չստացվեց)[1]: Շուկայական հարաբերությունների սմիթյան տեսության ճիշտ ընկալման համար խիստ կարևոր այս խնդիրները հանիրավի անտեսվում են և տեսության իմաստը ներկայացվում է աղավաղված տեսքով:

Ընդունված է, որ մեր հանրապետությունում տնտեսական բարեփոխումները սկսեցին ժամանակակից մոնետարիզմի կնքահայր Միլտոն Ֆրիդմենի գաղափարների «հովանու ներքո» և որոնք ընկած էին 1990-ական թվականներին Հայաստանում իրականացված տնտեսական քաղաքականության հիմքում: Ու թեև Մ.Ֆրիդմենն իր աշխատություններում երբեմն արտահայտում էր ծայրահեղական մտքեր, սակայն նա դրանք չէր հասցնում աբսուրդի աստիճանի, ինչն արեցին նրա հայկական հետևորդները: Բավական է հիշատակել «հեղինակային» մտքի աղավաղման մեկ բնորոշ օրինակ. հայրենական «բարեփոխիչները» հավաստում են, որ Մ.Ֆրիդմենն է առաջադրել ազատականների հիմնարար կարգախոսը՝ «որքան փոքր է պետական միջամտությունը տնտեսությունում, այնքան լավ է»: Սակայն Մ.Ֆրիդմենի աշխատություններում բազմաթիվ անգամ ընդգծված է, որ «պետական միջամտությունը պետք է լինի ոչ շատ, որքան պետք է», և դրա հետ մեկտեղ, հեղինակն ընդգծում է, որ «գործնական կյանքում դրան հասնելը խիստ դժվար է»[2]:

Վերջապես չի կարելի չհիշատակել մարքսիզմի տնտեսական հայեցակարգը: Նախորդ 10 տարիների ընթացքում ընդունված էր մարքսիզմի մասին անպայմանորեն արտահայտվել բացասական ասպեկտով. անիմաստ, երկրորդային, հակագիտական և այլն: Սակայն ոչ ոք չի կարող ժխտել, որ Կ.Մարքսի տնտեսագիտական ուսմունքը, ի հեճուկս քննադատների, խիստ ամուր է, աչքի է ընկնում կառուցվածքայնությամբ և համակարգային մոտեցմամբ, և այդ չափանիշներով անհատական տնտեսագետ-տեսաբանների աշխատությունների մեջ լավագույնն է համարվում: Ի դեպ, արժե նաև նշել, որ երկրորդ հազարամյակի ամենանշանավոր մարդ է ճանաչվել Կ.Մարքսը: Միևնույն ժամանակ, մյուս տեսություններն ու հայեցակարգերը, այդ թվում՝ Նոբելյան մրցանակների արժանացած բազմաթիվ աշխատություններ կամ խիստ իրավիճակային ու մակերեսային են կամ աչքի են ընկնում տվյալ պահին Արևմուտքին անհրաժեշտ կամ պահանջարկված տեսություն դառնալու «ընդունակությամբ»:

Մարքս-տնտեսագետի ժամանակակից քննադատությունը հաճախ «հեռու չի անցնում» Գ.ՈՒելսի դիրքորոշումից, որի կարծիքով «Կապիտալը» կարդալու իր բոլոր փորձերի միակ արդյունքը գրքում պատկերված հեղինակի մորուքից քաշելն էր[3]:

Բնական է, որ մարքսիզմը նույնպես զերծ չէ թերություններից, որոնց մասին բավականին հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարվել Յ.Պեվզների վերջին աշխատություններում: Դրանք անհրաժեշտ է վերլուծել, հերքել, հաշվի առնել և այլն՝ դրանով իսկ Կ.Մարքսի ուսմունքին վերաբերվելով մյուս տեսություններին համանման կերպով: Սակայն չպետք է մոռանալ նաև այն մասին (որի հետ, ի դեպ, կհամաձայնվեն և՛ Մարքսի կողմնակիցները, և՛ քննադատները), որ նախկին ԽՍՀՄ-ում տնտեսական քաղաքականությունը բնավ մարքսիստական չէր կամ, ավելի ճիշտ, ոչ միշտ էր հետևում Մարքսի տնտեսագիտական տեսության բոլոր նրբերանգներին: Եթե նույնիսկ խորհրդային տնտեսությունը ճանաչենք մարքսիստական և ընդունենք այդ տեսության ոչ կենսունակությունը, մնում է զարմանալ նախկին ԽՍՀՄ-ում նրա գործնական արտացոլման երկարատևության վրա, այն դեպքում, երբ մի շարք արևմտյան երկրներում ամենաբարձր մակարդակում տնտեսական որոշումների ընդունման գործում բեյնսականության լիիրավ «տիրապետության» ժամկետը կրկնակի անգամ կարճ է եղել: Դրա հետ մեկտեղ՝ մարքսիստական տնտեսագիտությունը մշտապես կրել է համայնավարական գաղափարախոսության ծանր բեռը, որը կտրուկ իջեցնում էր նման տնտեսագիտության պոտենցիալ արդյունավետությունը թեկուզև այն պատճառով, որ լրջորեն սահմանափակում էր մշակվող տնտեսական քաղաքականության ճկունությունը, փորձարկումների ազատությունը և այլն:

Վերը շարադրվածը բնավ չի ենթադրում գոյություն ունեցող տնտեսագիտական տեսությունների ուսումնասիրման կամ նոր հայեցակարգերի ստեղծման աննպատակահարմարությունը: Ընդհակառակը, նման պահանջը մեծանում է որոշ գաղափարների երկրորդային բնույթը և մյուսների պահանջարկված նորույթը բացահայտելու պատճառով: Մեր խնդիրն է՝ առաջին հերթին, ուշադրություն դարձնել գործնական միջոցառումների այլափոխված էությունը բարձրանում կամ հանրաճանաչ տեսություններով քողարկելու փորձերի վրա:

---

[1] Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М., т. 1., 1989, с. 88, 89.

[2] А.Дейкич, "Новая экономика" Клинтона и "профицитные планы" Буша, "США и Канада", 2001, N10, стр. 8

[3] Տե՛ս նույն տեղը:

Ինչպես տեսնում ենք, տնտեսագիտության տեսական հայեցակարգերի, նրանց մեկնաբանումների և գործնական միջոցառումների, ինչպես նաև տնտեսական ռազմավարության ուղիների միջև փաստացի խզումը տարբեր երկրներում խիստ բազմերանգ է և դրանց բազմաբնույթ լինելը ծնել է տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունների նոր «մասնաճյուղեր»՝ նեոքեյնսականություն, նեոինստիտուցիոնալիզմ, հետլիբերալիզմ և այլն: Տնտեսական իրավիճակային և տնտեսական քաղաքականության անվերջ բազմազանությունն այս կամ այն տեսության հիմնադրույթների հետ ճշգրտորեն կապելու ձգտումը հանգեցրել է այդ տեսությունների մասնատմանը, սինթեզմանը և վերափոխումներին: Վերջիններս երբեմն այնքան խոր բնույթ են կրում, որ սկզբնական տեսական հայեցակարգի գլխավոր իմաստը զրկվում է բազմաթիվ բաղադրատարրերից (երբեմն նաև անհրաժեշտ), և արդյունքում վերջին մի քանի տասնամյակներում դիտարկվում է պահպանողական, քեյնսական և տնտեսագիտական մտքի այլ ուղղությունների ակնհայտ մերձեցման գործընթաց: Նման փոփոխությունների ոչ պատահական բնույթը, ավելին, դրա դրսևորման ուշացած օրինաչափությունը, ըստ երևույթին, կարելի է բացատրել երկու հանգամանքներով: Առաջինը կայանում է տեսությունների և ուսմունքների հետագա մասնատման հետզհետե աճող անիմաստության մեջ: Այս գործողության համեմատաբար պարզությունը տեսությունն էլ ավելի է հեռացնում կենսական պահանջմունքներից, դրանք վերածում են առանձին իրավիճակներում կողմնորոշվելու ոչ միշտ հավասարակշռված և փոխադարձ կապված կարճատև քայլերի՝ դրանով իսկ կորցնելով կապը հասարակական պահանջմունքների և տնտեսական զարգացման միջև: Երկրորդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հասուն կապիտալիզմի գործնական կյանքը համառորեն դրդում է տնտեսագիտական տեսության և գործնական միջոցառումների փոխհարաբերությունների վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումների մշակմանը: Զարգացած երկրներում տնտեսական գործընթացների գործնական առանձնահատկությունները տեսական ծայրահեղություններից երկրի տնտեսական ուղղվածության «փախուստի» համար ավելի ու ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում:

Հատկապես ԱՄՆ-ի պարագայում տնտեսական քաղաքականության մշակման և վարչակազմի ամենօրյա գործնական միջոցառումների ընթացքում տնտեսագիտության տեսական հիմքերի ու գործնական կյանքի հարաբերակցության հիմնախնդիրը խիստ հետաքրքիր է: Այստեղ բացահայտվում են բազմաթիվ զուգադիպություններ և հակասություններ: Նույնիսկ հարաբերական տնտեսական հաջողությունների ժամանակաշրջանների տեսական երանգը երբեմն խիստ հակասական է: 1960-ական թվականներին ԱՄՆ-ում երկարաժամկետ տնտեսական աճի գլխավոր հեղինակներից մեկին՝ Ջ.Քենեդու խորհրդական Ու.Հելլերին, կոչում էին և՛ նեոպահպանողական, և՛ քեյնսական՝ գովաբանելով ու քննադատելով բացառապես միևնույն տնտեսական միջոցառումների իրականացման համար: Նախագահ Լ.Ջոնսոնը պատմության մեջ մտավ որպես ամերիկյան պետությունը դեպի «հումանիզացիայի» կողմը կտրուկ շրջադարձ ազդարարող, «Մեծ հասարակության» խոշորագույն սոցիալ-տնտեսական ծրագրի հեղինակ, միևնույն ժամանակ, նրա քննադատների կարծիքով, այդ ծրագիրը սկիզբ դրեց ԱՄՆ-ի տնտեսության արդյունավետության անկմանը: Ռ.Նիքսոնը երկիրը ներքաշեց 1970-ական թվականների ճգնաժամի մեջ, սակայն այդ ճգնաժամը հիմնականում պայմանավորված էր ոչ այնքան պետական կարգավորման «ավելցուկներով», որքան էներգոհումքային ոլորտում իրավիճակի արմատական փոփոխությամբ և մեծամասամբ պարունակում էր քաղաքական արմատներ, թեև նույնիսկ այդ պայմաններում 1971-1973 թվականները նշանավոր են իրական ՀՆԱ-ի 5% տարեկան միջին աճի տեմպերով, իսկ 1976-1978 թվականները՝ ավելի քան 5% աճի տեմպերով:

Քարտեր-Ֆորդի նախագահության ժամանակաշրջանը ընդունված է համարել «կործանարար» այն դեպքում, երբ որպես տնտեսական հաջողությունների ժամանակաշրջան՝ մատուցվում է ռեյգանյան ժամանակահատվածը, երբ իրական ՀՆԱ-ի աճի տեմպը չէր գերազանցում 4%-ը[1]: «Ռեյգանոմիկան» ներկայացվում է նեոպահպանողականության արդյունավետության համարյա թե էտալոնային օրինակ, այնինչ նրա իրականացումն ամբողջությամբ համապատասխանում է քեյնսական հիմնադրույթներին: Բ.Քլինթոնի տնտեսական ռազմավարությունը հազվադեպ են կապում որևէ տեսական հայեցակարգի դրույթներին, քանի որ տնտեսության բնագավառում նրա հիմնական գործողությունները կարելի է համարել «ազատական քեյնսականություն», որը զուրկ է ներքին իմաստից: Միևնույն ժամանակ, Քլինթոնի իշխանության օրոք վառ արտահայտվեցին այն ուրվագծերը, որոնք առաջին անգամ երևան էին եկել 1930-ական թվականների ճգնաժամի հետևանքների վերացման ժամանակահատվածում, երբ կործանվեց դասական պահպանողական գաղափարախոսությունը. Ֆ.Ռուզվելտի հակաճգնաժամային բոլոր քայլերը հիմնված էին ծառացած խնդիրների լուծման իրավիճակային մոտեցումների վրա: Որպես տեսություն և հայեցակարգ՝ քեյնսականությունը ճանաչում ստացավ Ֆ.Ռուզվելտի իշխանության գալուց մի քանի տարի անց: Բ.Քլինթոնը նույնպես հետապնդում էր նմանատիպ պրագմատիկ նպատակներ, ծագող տնտեսական խնդիրները լուծում էր պետական կարգավորման առկա «գործիքակազմից» օգտվելով՝ առանց տեսական հիմնադրույթների վրա «հետադարձ հայացք նետելու»: Այս մոտեցումը Բ.Քլինթոնին ապահովեց հաջողություն, ինչպես ժամանակին հաջողություն էր ապահովել Ֆ.Ռուզվելտին: Հնարավոր է, որ վերը նշվածը վկայում է գործնական պահանջմունքներից մակրոտնտեսագիտական տեսությունների հետ մնալու մասին, սակայն թույլատրելի են նաև այլ մեկնաբանություններ:

Մեր հանրապետությունում իրականացվող և իրականացվելիք տնտեսական քաղաքականության տեսակետից առավել կարևոր է հետևյալ փաստի ամրագրումը. բարենպաստ տնտեսական զարգացման քիչ թե շատ երկարատև ժամանակաշրջանը չի կարելի վերագրել միայն մոնետարիստական գաղափարներին, ընդհակառակը, հաջողությունն ուղեկցել է միայն տնտեսական հիմնախնդիրներն առանց «տեսական բազիսի» փոխկապվածության լուծող վարչակազմերին: Գործնական հաջողություններն ավելի հաճախ վերագրում էին պատրաստի հայեցակարգերին, որպեսզի հմտորեն ընդգծեն վերջիններիս նշանակությունը և կարևորությունը:

---

[1] Հաշվարկված է ըստ Economic Report the President. Transmitted to the Congress January 2001. Wash., 2001., p. 279.

Այստեղ տեղին է մեր հանրապետության համար անհրաժեշտ ևս մեկ եզրահանգում կատարելը. տնտեսական ռազմավարության և նրա շրջանակներում առանձին միջոցառումների սերտ փոխկապվածությունն առավել տարածված տնտեսագիտական տեսություններին, առավել հաճախ հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների, և այդ պատճառով, ծայրահեղ դեպքում, չի կարող նպատակահարմար լինել[1]:

Վերջապես, տնտեսագիտական տեսությունների բազմացումը և մասնատումը մեծապես ստիպում է «քննարկումներ» անցկացնել ոչ թե տնտեսական գործընթացների օրինաչափությունների կամ տարբերությունների, այլ տարբեր հեղինակների կողմից այդ գործընթացների մասին գրված մտքերի տարբերությունների մասին: Տեսությունների մասնատումը ստիպում է իրավիճակային մշակումներն ընդունել որպես լիարժեք և խոշորամասշտաբ համակարգեր, և այստեղից բխում է սկզբունքորեն անհամադրելի այնպիսի երևույթների համադրման և համեմատության փորձերը, ինչպիսիք են Ա.Սմիթի շուկայական տնտեսագիտությունը և Մ.Ֆրիդմենի մոնետարիզմը, որոնք, լավագույն դեպքում, շոշափում են սմիթյան տեսության մակերևութային մասը: Մյուս կողմից, մասնատումն ընդլայնում է հանրաճանաչ որևէ տեսության հստակ նախանշաններ չունեցող ցանկացած տնտեսական ռազմավարության անվանման ազատությունը, որը, ըստ էության, ներկայացնում է հեղինակավոր և համակարգված որևէ տնտեսագիտական ուսմունքի վերափոխումներից մեկը: Ժամանակին համընթաց՝ այդ վերափոխումները կարող են անվերջ բազմանալ, քանի որ տնտեսական իրավիճակը և գործընթացները փոփոխվում են խիստ արագ՝ չկրկնելով նախորդին, ստեղծելով գործունեության պայմանների նոր համախումբ, դրանով իսկ արդարացնելով նոր տեսությունների ի հայտ գալը և ճանաչում ապահովելով նրանց հեղինակներին: Հեշտությամբ կարելի է պատկերացնել «պահպանողական բնյնականության», «մարքսիստական լիբերալիզմի», «նեոմոնետարիզմի» և տարաբնույթ այլ հոսանքների գոյությունը: Առավել կարևոր է, սակայն, այն փաստը, որ տնտեսական ռազմավարության և քաղաքականության գործնական մշակումն ավելի ու ավելի է յուրացնում առաջին հայացքից էկլեկտիկ սկզբունքները և հնարքները: Դրանք առավել ակնհայտ դրսևորվեցին Բ.Քլինթոնի վարչակազմի գործունեության ժամանակ, և այդ ուղղությանը հակվում են նաև Ջ.Բուշ-Կրտսերի գործունեության հիմնական առանձնահատկությունները: Նշենք նաև, որ ո՛չ Բ.Քլինթոնը, ո՛չ Ջ.Բուշ-Կրտսերը չեն կապել իրենց գործունեությունը որևէ տեսական ուղղության հետ:

Վերը նշված մոտեցումները մեզ հանգեցնում են «նոր տնտեսության» գաղափարին: Առավել հայտնի տնտեսագետները բավականին զգույշ են իրենց եզրակացություններում, սակայն «նոր տնտեսությունը» միանշանակորեն համարում են զարգացած կապիտալիստական երկրների գործունեության հաջորդ փուլը: Դեռևս ամբողջությամբ հստակեցված չէ, սակայն խոսքը վերաբերում է «հետինդուստրիալ» հասարակության նոր մակարդակին, զարգացման միանգամայն նոր, այսպես կոչված, «գերհետինդուստրիալ» փուլին: Թվային և փաստացի տվյալները տպավորիչ են, սակայն անալիտիկ կողմն առայժմ թույլ է, ընդհանրացումները ճշգրտված չեն, եզրահանգումները «տառապում են» միակողմանիությամբ: Առավել ևս, բավարար չեն շուկայական գաղափարների «հաղթարշավը» համաշխարհային տնտեսության մասշտաբով ազդարարող փաստերը: Օրինակ, ԱՄՆ-ում վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցող փոփոխություններն անվանվեցին «հիմնարար», միևնույն ժամանակ նաև «անկանխատեսելի»: Սակայն ուշադրություն է գրավում նաև «նոր տնտեսության» անցնելու ուղիների անկախությունը տեսական դրույթներից: Հեղինակները չեն փնտրում հաջողությունների (անհաջողությունների) գաղտնիքն առանձին տեսական հայեցակարգերում և չեն ձգտում դրանք կապել որոշակի տնտեսագետների հետ, սակայն փորձում են իրենց երկրի ոչ վաղ անցյալի տնտեսության պատմության իրադարձությունները «դասակարգել» այն կարգով, որը նրանց թվում է տրամաբանական՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանի տնտեսական քաղաքականության ձևավորման գործընթացը «ներսից» դիտարկելու պարագայում և չի հակասում հանրահայտ փաստերի տրամաբանությանն ու նրանց փոխներգործության արդյունքներին:

«Նոր տնտեսության» դարաշրջանի գալստյան գլխավոր վկայությունն ընդունված է համարել տնտեսության զարգացման ներկա վիճակն ու միտումները բնորոշող բարձր ցուցանիշների նվաճում՝ ներառյալ աշխատանքի արտադրողականության արագ աճը, բնակչության եկամուտների ավելացումը, գործազրկության մակարդակի նվազումը և ինֆլյացիայի չափավոր տեմպերը: Նշված պարամետրերի միաժամանակյա բանական փոփոխությունները համարվում են միմյանց փոխլրացնող երկու գործոնների արդյունավետ և համալիր գործողությունների արդյունքը, նոր տեխնոլոգիաների և նոր կազմակերպականավարչական մեթոդների ներդնումը մասնավոր ձեռնարկատիրության մեջ և խելամիտ տնտեսական քաղաքականությունը[2]:

Ուշագրավ են «նոր տնտեսության» այս կիսապաշտոնական սահմանման երկու առանձնահատուկ կողմերը. առաջին հերթին, բացակայում է որակական դոմինանտը, մինչ այժմ խոսքը վերաբերում էր տնտեսական իրավիճակի կարևորագույն ցուցանիշների հաջող համադրմանը, որի շարունակական կայունությունը հանգեցրել է զարգացած երկրների տնտեսությունների գործունեության նշանակալի տեղաշարժերին, այսինքն՝ ժամանակաշրջանի նոր «փուլային» նշանակման համար նոր որակական նշանները բացակայում են: Երկրորդ, այս անգամ «նոր տնտեսության» ստեղծման գործում առավել չափավոր տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաներին, ընդ որում, իմաստավորված փորձ է արվում սթափ գնահատել դրանց մասնակցությունը վերջին տարիների բարենպաստ տնտեսական արդյունքներին: Բացի այդ, քննարկման առարկա է դարձել նաև աշխատանքի արտադրողականության խթանման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների ընդունակության հարցը: Տնտեսագետների մեծ մասի կարծիքով հենց այս ցուցանիշն է ի

---

[1] Առավել մանրամասն տե՛ս Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ. «Իրականի և անիրական միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն», Երևան, Տիգրան Մեծ, 2004, էջ 45-55:

[2] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, Եր., «Տիգրան Մեծ», 2003:

վիճակի արտահայտել վերարտադրության գործընթացի իսկական, արմատական վերափոխման գլխավոր նախանշանը, որն իրավունք կտա խոսելու տնտեսության զարգացման իրապես նոր փուլի մասին:

Եթե Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոուն 1998 թվականին կտրականապես հերքեց զարգացած կապիտալիզմի նոր փուլի հավանականությունը, հիմնվելով արտադրողականության վրա համակարգիչների ազդեցությունն ապացուցող նախանշանների բացակայության վրա, ապա արդեն 2000 թվականին «նոր տնտեսության» հայեցակարգի քննադատների թիվը խիստ աճեց, որոնք մշակեցին այդ գաղափարի հերքման ամբողջական համակարգ՝ վերլուծելով և գնահատելով արտադրողականության աճի վրա տարբեր գործոնների, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը: Օրինակ, ամերիկյան տնտեսագետ Ռ.Գորդոնի հաշվարկներով, 1995 թվականից հետո ԱՄՆ-ի տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ընդհանուր հավելաճի մեջ համակարգչայնացման տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0,07%, այն դեպքում, երբ հավելաճը կազմել է 1,33%: Ռ.Գորդոնի հաշվարկներով, սահմանված ժամկետում համակարգչայնացման ոլորտում իրականացվող փաստացի ներդրումները պետք է ապահովեին տնտեսության հիմնական ճյուղերի (ընդհանուրի 88%-ը) աշխատանքի արտադրողականության 0,33% հավելաճ: Այլ կերպ ասած՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրված սպասվող ներուժը բավականաչափ գերացանցեց ստացված արդյունքները[1]:

Բնական է, որ խոսքը չի վերաբերում համակարգչային տեխնիկայի մնացած առավելությունների բացառմանը (աշխատանքի հարմարավետություն, հաշվարկների արագագործություն, խմբագրում և այլն), քանի որ դրանք ակնհայտ են: Սակայն Ռ.Գորդոնի կարծիքով, արտադրողականության բարձրացման գործում համակարգիչները ներդրել են այն ամենը, ինչին ընդունակ են եղել[2]:

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՃՀ ասիստենտ

Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ (ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ)

Ռուս տնտեսագետ Մ.Տուգան-Բարանովսկին շուրջ հարյուր տարի առաջ պարբերական արդյունաբերական ճգնաժամերը համարում էր «տնտեսական կարգի ամենահանելուկային և անհասկանալի» ու գիտության մեջ մինչև վերջ չբացատրված երևույթներից մեկը:[3] Համաշխարհային տնտեսագիտական մտքի երևելիների (Ս. դը Սիսմոնդի, Կ.Մարքս, Կ.Ժուգլյար, Մ.Տուգան-Բարանովսկի, Ն.Կոնդրատև, Ա.Շպիտգոֆ, Ի.Շումպետեր, Ջ.Հիկս, Է.Հանսեն, և ուրիշներ) աշխատությունների մատենագիտական ցանկը կլիներ թերի, եթե նրանում բացակայեին Մենտոր Բունիաթյանի աշխատությունները:

Սույն հոդվածում անդրադառնում ենք արդյունաբերական ճգնաժամերի վերաբերյալ հայ տնտեսագետի հայեցությանը, որպես իր իսկ արտահայտությամբ «առավել բարդ և նշանակալից երևույթներից» մեկի:

Առևտրական կապիտալը ավելի շարժուն է և վերաբերում է ապրանքներին և այլ շարժական արժեքներին: Ապրանքաշրջանառության խանգարումները կարճատև բնույթ ունեն և հաճախ ավարտվում են հենց առևտրի ոլորտով: Այլ է արդյունաբերությունը, որտեղ գերազանցապես իշխում է անշարժ կապիտալը և զբաղված է մեծ թվով աշխատուժ: Եվ բնական է, որ արդյունաբերական ճգնաժամը առաջ է բերում վնասներ և շահույթի անկում տևական ժամանակով, ինչը ենթադրում է ինչպես կապիտալի շահագործման, այնպես էլ զբաղված աշխատուժի կրճատում: Այսինքն ինչպես նկատում է Մ.Բունիաթյանը, ճգնաժամը դառնում է ոչ միայն «բաշխման ֆենոմեն», այլև մեծապես ազդում է հասարակական կապիտալի կազմի և արտադրողականության վրա, ինչն առավել խորն ու բացասաբար է անդրադառնում երկրի տնտեսական բարեկեցության վրա:

Արդյունաբերության որևէ ճյուղում ճգնաժամը դրսևորվում է որպես նրա արտադրողական ուժերի և դրանց շահավետ օգտագործման հնարավորության միջև անհամապատասխանության հետևանք, երբ շուկան գերլցվում է, գներն իջնում են և արտադրողական ուժերը օգտագործվում են ոչ լրիվ հզորությամբ, մինչև կուտակված արտադրանքի իրացումը:

Տնտեսական կազմակերպությունը անհամեմատ բարդացել է, վերաճել ներհյուսված համակարգի: Աշխատանքի լայն բաժանման և արտադրության մասնատվածության պայմաններում առավել դժվարացել է շուկայական կոնյունկտուրան և ապրանքների արտադրությունը իր բոլոր փուլերում համապատասխանեցնել հասարակության իրական պահանջներին: Արդյունաբերական ձեռնարկությունները հարմարեցված են որոշակի արտադրությունների, որոնց փոփոխելը հաճախ կապված է մեծ բարդությունների հետ: Ուստի փոփոխությունը սպառման պայմաններում, ինչպիսի պատճառներով էլ այն պայմանավորված լինի, կարող է կրճատել պահանջարկը տվյալ արդյունքի նկատմամբ՝ առաջ բերելով վերակապիտալացման անհրաժեշտություն:

Նման հետևանքներ կարող է ունենալ նաև տեխնիկական առաջընթացը և կապիտալի արտադրողականության բարձրացումը: Ու թեև այս դեպքում արտադրանքը էժանանում է, սակայն խզվածությունը առաջարկի և պահանջարկի միջև շարունակում է պահպանվել:

Մ.Բունիաթյանի դիտողությունները վկայում են վերլուծության առարկայի բարդության և ոչ միանշանակ բացատրության մասին: Հենց այս իմաստով էլ նա համաձայնում է հին պատմական դպրոցի ներկայացուցիչ

---

[1] Federal Reserve Bank of San Francisco Economic Letter. N2000-34, 10.11.2000, p. 1-3.
[2] А.Дейкич, "Новая экономика'' Клинтона и ''профицитные планы'' Буша, "США и Канада'', 2001, N10, стр. 22-23.
[3] М.И.Туган-Барановский, Периодические промышленные кризисы, СПб, 1914, с.XIII.